



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՏԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՊՑԻՆԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
TRANSPARENCY INTERNATIONAL
anti-corruption center

Օրինականության
ազգային համակարգ
կոռուպցիայի
ընկալման
իմաստով

Երկրի

կառավարման
գործում

Կոռուպցիայի
համաշխարհային

Պայքար
կոռուպցիայի

ամրապնդել ժողովրդավարությունը

Օրինականության
ազգային

Դեմ
բարոմետր
մարդու
իրավունքների
պաշտպանություն
համակարգ

ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

11

ANNUAL REPORT

Կոռուպցիայի
ընկալման
իմաստով
Պայքար
կոռուպցիայի
ամրապնդել ժողովրդավարությունը
Օրինականության
ազգային
Դեմ
բարոմետր
մարդու
իրավունքների
պաշտպանություն
համակարգ
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Սույն հրապարակումն իրականացվել է Բաց
հասարակության ինստիտուտ-Բուդապեշտի աջակցությամբ

This publication was supported by the
Open Society Institute-Budapest

Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն
Հայաստան, Երևան 0025,
Այգեստան, 9-րդ փողոց, տուն 6
Հեռ.՝ +374-10-569910, 553069
Ֆաքս՝ +374-10-571399
Էլ. փոստ՝ info@transparency.am
www.transparency.am

Տպաքանակը՝ 50 օրինակ
Դիզայնը և տպագրությունը՝ Մատիտ Ստուդիայի / www.matit.am

Transparency International Anti-corruption Center
6 Aygestan 9th Street
Yerevan 0025, Armenia
Phones: (37410) 569910, 553069
Fax: (37410) 571399
Email: info@transparency.am

www.transparency.am

50 printed copies
Design and publication by Matit Studio / www.matit.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS

Ներածական խոսք	2
Կազմակերպության մասին	4
Խորհուրդ	6
Աշխատակազմ	7
Գործընկերներ	8
Գործունեություն	10
Մրցանակներ	28
Խորհրդաժողովներ և այլ միջոցառումներ	30
Ֆինանսավորում	42
Աուդիտի եզրակացություն	45

Foreword	3
About the Organization	5
Board	6
Staff	7
Partners	9
Activities	11
Awards	29
Conferences and Other Events	31
Finances	42
Auditor's Report	47

ՆԵՐԱՃԱԿԱՆ ԽՈՍՔ

2011-ին աշխարհը ցնցած «արաբական գարունը», «գրավեք Ուլ Սթրիթը» և այլ շարժումներն ուղղված էին տարբեր երկրների իշխող քաղաքական և տնտեսական վերնախավերի այնպիսի արատների դեմ, որոնք նաև հետևանք էին այդ վերնախավերի կոռումպացվածության: Հայաստանում ևս ակնհայտորեն աճեց քաղաքացիական հասարակության ակտիվությունը՝ արտահայտելով հանրային բողոքն ընդդեմ երկրում տիրող անօրինականությունների, անարդարությունների և կոռուպցիայի, ինչը հատկապես զգալի էր սոցիալական ցանցերում:

ԹԻՅՎ 2011 թվականի գործունեությունը նույնպես նշանավորվեց ակտիվությամբ և բազմազանությամբ: Մշակվեց 2011-2015 թթ. գործունեության ռազմավարությունը և ուրվագծվեցին հիմնական ուղղությունները: Արձանագրվեց զգալի առաջընթաց կազմակերպության զարգացման առումով: Առաջին անգամ իրականացվեց կազմակերպության գործունեության արտաքին գնահատում: Ամենամյա ֆինանսական աուդիտը կատարվեց ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Կազմակերպությունն իր մասնակցությունը բերեց բազմաթիվ քաղաքացիական նախաձեռնություններում: Այն իր գործունեության մեջ սկսեց կիրառել Նոր մեթոդներ, ինչպիսիք են ռազմավարական դատավարությունը՝ համակարգային փոփոխությունների

հասնելու և տվյալների վիզուալացումը՝ կազմակերպության կողմից հավաքագրված տեղեկությունները հանրայնացնելու նպատակով:

2011-ին ԹԻՅՎ-ը Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի հետ համատեղ սահմանեց կազմակերպության հիմնադիր Ամայա Կոստանյանի անվան ամենամյա մրցանակ՝ խթանելու և պարգևատրելու քաղաքացիական ակտիվությունը Հայաստանում:

Առջևում սպասվում են համապետական և տեղական ընտրություններ, և Հայաստանի քաղաքացիական հասարակությունն ունի կարևորագույն առաքելություն՝ քաղաքացիների իրավագիտակցությունը բարձրացնելու և կոռուպցիայի հանդեպ հանրային հանդուրժողականությունը նվազեցնելու առումով: Հուսով ենք՝ կոռուպցիայի դեմ պայքարը կլինի ոչ միայն մեր, այնպես էլ՝ մյուս կազմակերպությունների օրակարգի կարևորագույն մասը: Հավատում ենք, որ միջազգային շարժումներն ու դրանց հաջողությունները օրինակ կծառայեն նաև մեր հասարակության մոբիլիզացման համար: Վստահ ենք, որ հայաստանյան քաղաքացիական հասարակության առողջ զանգվածի համատեղ պայքարն անխուսափելիորեն կառաջնորդի մեր երկիրը դեպի դրական փոփոխություններ և ժողովրդավարության հաղթանակ:

*Սոնա Այվազյան
ԹԻՅՎ նախագահ*

FOREWORD

“The Arab Spring”, “Occupy Wall Street” and other movements against the vices of political and economic ruling elites in various countries that shook the world in 2011 also occurred as a result of the elite corruptness. Civil society has become increasingly active in Armenia as well, expressed by public outcry against illegalities, injustice and corruption, which found reflection predominantly in social networks.

TIAC activity in 2011 was also marked by activeness and diversity. The organization developed its 2011-2015 strategy and outlined its main areas of activity. It made a significant progress in organizational development - underwent an external evaluation of its activity for the first time. Its annual financial audit was carried out in compliance with international standards.

TIAC took part in a number of civic initiatives. It began to use new methods in its activity, such as strategic litigation to achieve systemic changes, and visualization of data in order to publicize the information gathered by the organization.

Jointly with Open Society Foundations-Armenia, TIAC established an annual Amalia Kostanyan award in 2011 to promote and to reward civic engagement in Armenia.

We face national and local government elections in near future, in which civil society of Armenia has a vital

mission to accomplish - by raising legal awareness of citizens and reducing tolerance of public corruption. We hope that fight against corruption would be an important item not only on our but on other organizations' agendas as well. We believe that international movements and their success stories would set examples for mobilizing our society as well. We are certain that joint struggle of Armenia's healthy part of civil society will inevitably lead our country to positive changes on its way to achieve democratic victory.

Sona Ayvazyan
TIAC Chair

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տարածաշրջանային զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000 թ. հուլիսին: 2001 թ. հոկտեմբերից այն հավատարմագրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշլ» (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն շարժման կողմից՝ ներկայացնելու այն Հայաստանում: 2008 թ. փետրվարին կազմակերպությունը վերագրանցվել և վերանվանվել է «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ (ԹԻՀԿ):

Կազմակերպության առաքելությունն է նպաստել արդյունավետ հանրային բաղաժանանությանը և կառավարմանը Հայաստանում՝ կրճատելու կոռուպցիան և ամրապնդելու ժողովրդավարությունը:

Նպատակներն են՝ նպաստել բաղաժանան, տնտեսական և սոցիալական բարեփոխումների համար բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը, աջակցել թափանցիկ ու հաշվետվողական կառավարման համակարգի կայացմանը և խթանել ժողովրդավարական գործընթացները: ԹԻՀԿ գործունեությունը ծավալվում է չորս հիմնական ուղղություններով՝ հակակոռուպցիոն բաղաժանանություն, ընտրություններ, հանրային ռեսուրսներ և մարդու իրավունքներ:

Գործունեության շրջանակը ներառում է հետևյալը. բաղաժանան, տնտեսական և սոցիալական բարեփոխումների վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացում, դրանց մոնիտորինգ և գնահատում, ընտրությունների գործընթացներում դիտորդական

առաքելության իրականացում, հանրային բաղաժանանության և կառավարման գործընթացների վերաբերյալ հասարակության իրազեկում, մասնակցության համար անհրաժեշտ կարողությունների զարգացում և մասնագիտական աջակցության տրամադրում, հանրային բաղաժանանության և կառավարման բարեփոխումների արդյունավետությանն ուղղված շահերի պաշտպանություն:

2011 թվականին ԹԻՀԿ-ն անցել է արտաքին գնահատման գործընթաց՝ վերլուծելու կազմակերպության գործունեության արդյունավետությունը և ձեռնարկելու միջոցներ հետագա կատարելագործման ուղղությամբ: Այս համատեքստում, կազմակերպության զարգացմանը միտված հիմնական գործողությունները հաշվետու տարում ներառել են 2011-2015 թթ. ռազմավարության ընդունումը և կազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հստակեցումը՝ աշխատատեղերի դասակարգմամբ /գրեյդինգավորմամբ/ և կոմպենսացիոն համակարգի սահմանմամբ: Կազմակերպության զարգացմանը զգալիորեն նպաստել է ԹԻՀԿ մասնակցությունը ԹԻ հակակոռուպցիոն շարժման շրջանակներում ծավալվող ցանցային խորհրդակցություններին, ինչպես նաև անդամների տարեկան համաժողովին: Բաց հասարակության ինստիտուտ – Բուդապեշտի կողմից տրամադրված ինստիտուցիոնալ աջակցության շնորհիվ մեծապես ապահովվել է կազմակերպության գործունեության կայունությունն ու արդյունավետությունը:

ABOUT THE ORGANIZATION

The organization was established in July 2000 as a local NGO - the Center for Regional Development. In October 2001, it was granted the status of accredited National Chapter of Transparency International (TI), the global anti-corruption movement. In February 2008, the organization was reregistered and renamed as Transparency International Anti-corruption Center NGO (TIAC).

The mission of the organization is to promote effective public policy and good governance in Armenia in order to reduce corruption and strengthen democracy.

Its goals are to promote the enabling environment for political, economic and social reforms, support the establishment of transparent and accountable governance system and foster democratic processes. TIAC carries out its activities within four main areas: anti-corruption policy, elections, public assets and human rights.

The scope of its activities includes the following: conducting research, monitoring and evaluation of political, economic and social reforms; observation of elections; raising public awareness on public policy and governance processes; building the capacity as well as provision of professional support for productive public participation; carrying out advocacy to provide effective public policy and governance reforms.


In 2011 TIAC underwent a process of external evaluation to analyze the effectiveness of the organization's activities and to take measures for its further improvement. In this context the main activities for organization development in the reporting year included: the adoption of 2011-2015 strategy and the clarification of the organization's structure and positions by job grading and the establishment of compensation system. TIAC's participation in network conferences, as well as Annual Membership Meetings within the framework of TI anti-corruption movement to a larger extent contributed to its organizational development. The organization's sustainability and effectiveness was chiefly ensured due to institutional support provided by the Open Society Institute – Budapest.

ԽՈՐՀՈՒՐԴ BOARD




Սոնա Այվազյան
Նախագահ
ԹԻՅԿ ծրագրի
ղեկավար

Sona Ayvazyan
Chair
TIAC Project Director




**Վազգեն
Կարապետյան**
Եվրասիա համագործակցության
հիմնադրամի
փոխնախագահ

Vazgen Karapetyan
Country Associate Director,
Eurasia Partnership
Foundation




Լանա Կարլովա
Տեմպուս ծրագրի Հայաստանի
ազգային գրասենյակի
ղեկավար

Lana Karlova
Coordinator of National
Tempus Office in Armenia



Դավիթ Սարգսյան
«Ամերիա» ՓԲԸ
բանկի իրավաբանական
ծառայությունների գծով
տնօրեն

David Sargsyan
Head of Legal Department,
“Ameria” CJSC



Սուրեն Սաղաթելյան
ՀՀ ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական
ծրագրերի կառավարման
կենտրոն» պետական
հիմնարկի գնումների գլխավոր
մասնագետ


Suren Saghatelian
Chief Procurement Officer,
“Foreign Financing
Projects Management
Center” of the Ministry of
Finance of Armenia, State
Enterprise

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ STAFF




Վարուժան Հոկտանյան
գործադիր տնօրեն

Varuzhan Hochtanyan
Executive Director



Սոնա Այվազյան
ծրագրի ղեկավար

Sona Ayvazyan
Project Director




Վախթանգ Սիրադեղյան
ծրագրի մասնագետ

Vakhtang Siradeghyan
Project Specialist



Լենա Նազարյան
ծրագրի մասնագետ

Lena Nazaryan
Project Specialist




Նունե Այդինյան
գործունեության
լուսաբանման մասնագետ

Nune Aydinyan
Public Awareness Specialist



Գոհար Գրիգորյան
հանրային կապերի մասնագետ

Gohar Grigoryan
Public Relations Specialist



Հերիքնազ Տիգրանյան
իրավախորհրդատու

Heriknaz Tigranyan
Legal Expert




Քրիստինե Մարգարյան
ադմինիստրատիվ ղեկավար

Christina Margaryan
Administrative Manager



Շահեն Շահինյան
գլխավոր հաշվապահ

Shahen Shahinyan
Chief Accountant



Էդիտա Նազարյան
վարչական հարցերով
օգնական

Edita Nazaryan
Administrative Assistant

ԳՈՐԾՆԱԿԵՐՆԵՐ

«Բանական իրականում» քաղաքացիական նախաձեռնություն

«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնություն

Երևանի մամուլի ակումբ ՀԿ

«Էկոդար» բնապահպանական ՀԿ

Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն

Թրանսփարենսի Ինթերնեշնլ Ադրբեջանի ներկայացուցչություն

Թրանսփարենսի Ինթերնեշնլ Վրաստանի ներկայացուցչություն

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ

Հայաստանի հելսինկյան կոմիտե ՀԿ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ

Հետաքննող լրագրողներ ՀԿ

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիա

«Մենք ենք այս քաղաքի տերը» հասարակական նախաձեռնություն

«Պետական կարիքների զոհեր» ՀԿ

PARTNERS

“Army in Reality” Civic Initiative

“Partnership for Open Society” Initiative

Yerevan Press Club NGO

“Ecodar” Environmental NGO

Teghut Defense Civic Initiative

Transparency International Azerbaijan

Transparency International Georgia

“Asparez” Journalists’ Club NGO

Helsinki Committee of Armenia NGO

Helsinki Citizens’ Assembly Vanadzor Office NGO

Investigative Journalists NGO

UN Coalition against Corruption

“We are the Owners of This City” Public Initiative

Victims of State Needs NGO

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



*Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ
պայքարող պետությունների խումբ (ԳՐԵԿՈ)*

«Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի իրականացման մոնիտորինգ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԹԻՅԿ-ն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստանձնած՝ ԳՐԵԿՈ-ի այն հանձնարարականների կատարման ընթացքը, որոնք Հայաստանը պետք է իրականացնեի ԳՐԵԿՈ-ի գնահատման առաջին և երկրորդ փուլերի համատեղ իրականացման վերաբերյալ զեկույցի հրապարակումից հետո:

Միջազգային պարտավորություններ

*Տնտեսական համագործակցության և
զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ)*

2011 թ. սեպտեմբերին ԹԻՅԿ ներկայացուցիչը մասնակցել է ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի (ՀԿՑ) հակակոռուպցիոն միջոցառումների Ստամբուլյան ծրագրի մոնիտորինգային 10-րդ և ՀԿՑ համակարգող խորհրդի 12-րդ նիստերին, այդ թվում՝ ներգրավվելով ՏՀԶԿ փորձագետների և Հայաստանի պատվիրակության միջև ընթացող երկկողմանի խորհրդակցություններին և Հայաստանի վերաբերյալ մոնիտորինգի երկրորդ փուլի զեկույցում ներառվող հակակոռուպցիոն նոր պարտավորությունների մշակման աշխատանքներին:

*Եվրոպական հարևանության
քաղաքականություն (ԵՀՔ)*

Նույն «Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի իրականացման մոնիտորինգ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԹԻՅԿ-ը ուսումնասիրել է նաև ԵՀՔ Հայաստանի միջոցառումների ծրագրից բխող դատաիրավական և հանրային ծառայության ոլորտների բարեփոխումների իրականացման ընթացքը: 2011 թ. մայիսին կազմակերպության գործադիր տնօրենը հարավկովկասյան երկրների ԹԻ գրասենյակների ներկայացուցիչների հետ համատեղ Բյուսելում ներկայացրել է ծրագրի արդյունքների հիման վրա պատրաստած՝ ԵՀՔ հակակոռուպցիոն պարտավորությունների կատարման վերաբերյալ 2010 թ. զեկույցը:

ANTI-CORRUPTION POLICY



International obligations

Organization for Economic Cooperation and Development (OECD)

TIAC representative took part in the 10th Monitoring Meeting of the Istanbul Anti-Corruption Action Plan and the 12th Steering Group Meeting of OECD Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia (ACN) in September 2011, getting actively involved in the work of bilateral consultations between OECD experts and Armenian delegation and in the development of new anti-corruption obligations and commitments on Armenia, included in the Second Round of Monitoring Report on Armenia.

Group of States against Corruption (GRECO)

In the scope of the “Monitoring of Implementation of European Neighborhood Policy” project TIAC studied Armenia’s compliance with the remaining partially implemented GRECO recommendations, which should have been carried out after the publication of the Joint First and Second Round Evaluation Report on Armenia.

European Neighborhood Policy (ENP)

Within the framework of the same “Monitoring of Implementation of European Neighborhood Policy” grant project TIAC also researched the Armenian Government’s compliance with the ENP EU-Armenia Action Plan commitments in addressing progress made in judicial reform and

Կազմակերպության ներկայացուցիչները նաև ներդրում են ունեցել «Գործընկերություն հասուն բաց հասարակության» նախաձեռնության կողմից պատրաստված «Հայաստանում Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը 2010 թ.» տարեկան զեկույցի մշակման աշխատանքներում, մասնավորապես, ներկայացնելով Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների իրականացման գործընթացը կոռուպցիայի դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

Եվրոպական Միության Արևելյան գործընկերություն (ԱԷԳ)

ԹԻՅԿ-ը մասնակցել է Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ազգային պլատֆորմի աշխատանքներին, ինչպես նաև՝ 2011 թ. Նոյեմբերին Լեհաստանի Պոզնան քաղաքում կայացած «Գործընկերություն հանուն ժողովրդավարական բարեփոխումների և եվրոպական ինտեգրման» խորագրով Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության համաժողովի երրորդ ամենամյա ընդհանուր ժողովին:

2011թ. հուլիս և սեպտեմբեր ամիսներին կազմակերպությունն իր ներդրումն է ունեցել գործընկեր կազմակերպությունների կողմից ձեռնարկված միջոցառումներին՝ ներկայացնելով ԱԷԳ շրջանակներում կոռուպցիայի դեմ պայքա-

րի ուղղությամբ բարեփոխումներին առնչվող առաջարկությունների իրականացման ընթացքը:

Իրավակիրառ պրակտիկա

2011թ. մայիսից մեկնարկել է «Իրավակիրառ պրակտիկայի մոնիտորինգ» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակում կազմակերպությունը դիտարկում է կոռուպցիոն գործերով իրականացվող դատավարությունները և կոռուպցիոն դրսևորումներ պարունակող հանցագործությունների առնչությամբ իրավապահ մարմինների գործողությունները: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 26 քրեական գործերի դատական նիստերի մոնիտորինգ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ մասնավորապես գնահատելով գործընթացների համապատասխանությունը հետևյալ սկզբունքներին. դատական քննության հրապարակայնություն, կողմերի հավասարություն ու մրցակցություն, անմեղության կանխավարկած, ողջամիտ ժամկետներում քննություն և պաշտպանության իրավունքի ապահովում: ՀՀ ոստիկանություն, Հատուկ քննչական ծառայություն ու Գլխավոր դատախազություն ներկայացվել է հանցագործության մասին 8 հաղորդում: Ծրագրի արդյունքները կամփոփվեն 2012 թվականին:

civil service administration. In May 2011, together with the representatives of other South Caucasus TI Chapters, TIAC Executive Director presented a report in Brussels on monitoring of Armenia's 2010 anti-corruption commitments, based on the findings of the project.

The representatives of the organization also contributed to the development civil society's annual report on "Armenia's European Neighborhood Policy Implementation in 2010," in particular presenting Armenia's compliance with its obligations in fighting corruption and environmental protection, prepared by "Partnership for Open Society" Initiative.

European Union initiative the Eastern Partnership (EaP)

TIAC participated in the work of the Eastern Partnership Civil Society Forum Armenian National Platform, as well as partook in the 3rd Annual Assembly of the Eastern Partnership Civil Society Forum (EaP CSF) "A Partnership for Democratic Reforms and European Integration" held in Poznan, Poland in November 2011.

During July and September the organization had its input in the events initiated by the partner organizations by addressing the progress made

in implementation of recommendations regarding anti-corruption reforms in the frame of EaP.

Law enforcement

Since May 2011 launch of "Monitoring of Law Enforcement Practices" grant project, TIAC monitored court litigations on corruption cases and law enforcement bodies' actions related to corruption crimes. Within the reporting period TIAC monitored 26 criminal court cases related to corruption in Yerevan's first instance courts of general jurisdiction and in Criminal Court of Appeal of Armenia, particularly through assessing the compliance of processes with the following principles: publicity of judicial investigation, equality of the parties and competition, presumption of innocence, investigation within reasonable time and ensuring right to defense. Eight reports on crime were filed to the Police, Special Investigation Service and Prosecutor General's Office. The findings of the project will be summed up in 2012.



Տեղեկատվության ազատություն

Թի Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցչությունների հետ համատեղ ԹԻՂԿ-ը ձեռնամուխ է եղել «Տեղեկատվության ազատությունը հարավկովկասյան երկրներում» դրամաշնորհային ծրագրի իրականացմանը: Ծրագրով նախատեսվում է ուսումնասիրել ոլորտին առնչվող միջազգային պարտավորությունները, օրինակելի պրակտիկան, դիտարկել առանձին երկրների օրենսդրության համապատասխանությունը միջազգային նորմերին, ստուգել տարբեր պետական կառույցների կողմից տեղեկատվություն տրամադրելու պարտավորության իրականացման պրակտիկան և հետազոտել հասարակական ընկալումը և կարծիքը տեղեկություն ստանալու կապակցությամբ քաղաքացիների իրավունքների, հնարավորությունների և հետաքրքրվածության առումով: Ծրագրի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն 2012 թվականին:

Կազմակերպությունն իր տեղեկատվության ազատության սահմանափակման երեք դեպքերով իրականացրել է «Ռազմավարական դատավարության» դրամաշնորհային ծրագիր՝ վիճարկելով պետական կառույցների անգործությունը: Պատասխանող կողմեր են հանդիսացել Երևանի քաղաքապետարանը՝ Երևան քաղաքի կանաչ տարածքների վերաբերյալ տվյալներ ու փաստաթղթեր չտրամադրելու համար, ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի պե-

տական կադաստրը՝ Երևանի կանաչ տարածքներից մեկի վարձակալական պայմանագրերի տրամադրումը առևտրային գաղտնիքի հիմքով մերժելու համար և ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեն՝ հանքարդյունաբերական ձեռնարկությունների կողմից բնապահպանական վճարների և այլ հարկերի մասին տեղեկությունը հարկային գաղտնիքի հիմքով մերժելու համար: Առաջին գործի դրական ելքի արդյունքում կազմակերպությունը Երևանի քաղաքապետարանից ստացել է պահանջվող փաստաթղթերը: Մյուս գործերով դատավարությունը շարունակվում է:

Freedom of Information

Together with peer organizations – TI Georgia and TI Azerbaijan, TIAC was engaged in the implementation of “Freedom of Information in the South Caucasus” grant project. It is provided to study international obligations and best practice related to the project, to observe compliance of certain countries’ legislation with international norms, to test different public agencies in performing their duty to provide requested information, and research public perception and opinion on access to information with regard to citizens’ rights, opportunities and interests. The project findings will be summarized and produced in 2012.

The organization carried out grant project on “Strategic Litigation” regarding three cases on limiting its freedom of information and sued the inaction of state institutions in a court of law. The defendant parties were the following information holders: Yerevan municipality, which failed to provide data and documents on green areas in Yerevan city; the State Committee of Real Estate Cadastre under the Government of Armenia which refused to provide lease agreement of a green area in Yerevan under the pretext of trade secret; and the State Revenue Committee under the Government of Armenia which refused to provide information on environmental and other taxes paid by mining companies under the pretext

of tax secret. As a result of positive outcome of the first case the organization managed to acquire the requested documents. The litigation continues with regard to the other cases.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



րական դրույթները՝ համաձայն Նոր Ընտրական օրենսգրքի: Ծրագրի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն 2012 թվականին:

ԹԻՅԿ Ներկայացուցիչը մասնակցել է 2011 թ. մարտին Տալինում կայացած՝ «Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը՝ ապահովելու թափանցիկ և ժողովրդավարական ընտրություններ» անվանումով միջոցառմանը, և Էստոնիայի խորհրդարանական ընտրություններում հանդես եկել դիտորդական առաքելությամբ:

Ընտրական գործընթացներ

2011 թ. Նոյեմբերից ԹԻՅԿ-ն սկսել է «2012 թ. խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման և հանրային գնումների մոնիտորինգ Հայաստանում 2011-2012 թթ.» դրամաշնորհային ծրագիրը: Ծրագիրը նախատեսում է ուսումնասիրել 2012 թ. խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցությունների կատարած նախընտրական քարոզչությանն առնչվող ծախսերը, ինչպես նաև պետական մարմինների կողմից այդ ժամանակահատվածում իրենց տրամադրության տակ եղած Նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների չարաշահումների դեպքերը: Հաշվետու տարում ուսումնասիրվել են նշված հարցերի կարգավորմանն ուղղված օրենսդ-

Քաղաքացիական ներգրավվածություն

Կազմակերպությունը Ժողովրդավարության «Ասպարեզ» ակումբի ու Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հետ համատեղ 2011 թ. Նոյեմբերից սկսել է «Ընտրությունների փոստատար. 2012 թ. խորհրդարանական ընտրություններ» ծրագիրը: Վերջինս նախատեսում է Հայաստանի շարքային քաղաքացիներին մասնակից դարձնել քաղաքական օրակարգի ձևավորմանը՝ ծրագրի «փոստատարների» օգնությամբ վեր հանելով և փոխանցելով նրանց հուզող հարցերն ու մտահոգությունները կուսակցություններին, ինչպես նաև՝ խթանել քաղաքական գործիչների հաշվետվողականությունը ընտրողների առջև: Ծրագրի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն 2012 թվականին:

ELECTIONS



Electoral processes

Since November 2011 TIAC embarked upon “Monitoring of 2012 Parliamentary Elections Campaign Finance and Public Procurement in 2011-2012 in Armenia” grant project. The project was designed to study election campaign expenses of the political parties running for parliament on proportional list during the election campaign of 2012 parliamentary elections, as well as the cases of misuse of material, financial and human resources that the state institutions had at their disposal. During the reporting period legislative provisions were studied intended for the regulation of the mentioned issues pursuant to the new Electoral Code. The Project will finalize its research and present in 2012.

In March 2011 TIAC representative took part in an event in Tallin on Civil Society Engagement in Securing Transparent and Democratic Elections and acted as an observer during parliamentary elections in Estonia.

Civic engagement

Together with “Asparez” Journalists’ Club and Helsinki Citizens’ Assembly Vanadzor Office, TIAC launched “Election Postman: Parliamentary Elections – 2012” project since November 2011. It is designed to engage ordinary citizens of Armenia in the political agenda-setting by raising their issues of concern through project “postmen” and delivering them to political parties, as well as to boost politicians’ accountability to the constituents. The project results will be summarized and presented in 2012.

ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ



Հանրային ունեցվածք

«Երևան քաղաքում քաղաքաշինության մոնիտորինգ» դրամաշնորհային ծրագրի շրջանակում ԹԻՂԿ-ը ստեղծել է Երևանի կանաչ տարածքների և պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ ինտերակտիվ էլեկտրոնային քարտեզ-շտեմարաններ: Կանաչ տարածքների մասին շտեմարանը ներառում է տեղեկություններ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների, դրանց մակերեսի, կառուցապատման, վարձակալների, շինարարության գործընթացում տեղ գտած քաղաքաշինական իրավախախտումների վերաբերյալ: Այն նաև հնարավորություն է տալիս համեմատել առանձին կանաչ տարածքների մակերեսների փոփոխությունը 1990-2007 թթ. ընկած ժամանակահատվածում: Պատմամշակութային հուշարձանների շտեմարանը ներառում է տեղեկություններ Եր-

ևանի բանդված-դնչացված և վտանգված հուշարձան-շենքերի, դրանց իրավական կարգավիճակի ու փաստացի վիճակի վերաբերյալ: Շտեմարաններում ամփոփվել են պետական մարմինների կողմից տրամադրված պաշտոնական և հասարակական կազմակերպությունների մոնիտորինգի արդյունքում ստացված տվյալներ:

Կազմակերպությունը կատարել է Երևանի քաղաքապետարանի պատվերով իրականացվող՝ Երևանի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի ուսումնասիրություն, կազմակերպել բնարկում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և ներկայացրել առաջարկություններ ՀՀ կառավարությանն ու Երևանի քաղաքապետարանին՝ մասնավորապես անդրադառնալով քաղաքի կանաչ տարածքների և պատմամշակութային հուշարձանների կառավարման խնդիրներին:



Public assets

Within the framework of “Monitoring of Urban Development in Yerevan City” grant project TIAC created interactive maps of green areas and historical and cultural monuments of Yerevan. The database on public green areas in Yerevan includes information on green spaces of general use, their surface, construction, lessees, and violations of urban development norms and other breaches of construction process. It also enables to compare the changes in surfaces of certain green spaces from 1990 to 2007 interactively. The database on cultural and historical monuments of Yerevan contains information on destroyed and endangered historic-cultural monument buildings of Yerevan, their legal and factual status. The databases sum up official data obtained from state institutions and NGOs as a result of monitoring.

The organization studied draft adjustment to Yerevan master plan, commissioned by Yerevan municipality, organized a discussion with the participation of stakeholders and made recommendations to the government of Armenia and Yerevan municipality by particularly addressing the issues of the green areas of Yerevan and the management of historic-cultural monuments.

TIAC also conducted a study of the legal bases of public participation in decision-making processes regarding urban development and their compliance with international norms and submitted recommendations to the state institutions intended for the improvement of transparency and accountability of the processes.

ԹԻՅԿ-ը նաև ուսումնասիրել է քաղաքաշինական գործունեությանն առնչվող որոշումների ընդունման ընթացքում հանրային մասնակցության իրավական հիմքերն ու դրանց համապատասխանությունը միջազգային նորմերին և ներկայացրել առաջարկություններ պետական կառույցներին՝ գործընթացների թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարելավելու նկատառումով:

Հանրային գնումներ

«Հանրային գնումների գործընթացում հաղթող մասնակիցների ընտրության փուլի կոռուպցիոն ռիսկերի վերլուծություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԹԻՅԿ-ն ուսումնասիրել է հանրային գնումների տարբեր համակարգերի լավագույն փորձը՝ համադրելով այն հայաստանյան պետական գնումների գործընթացների հետ և վեր է հանել գնումների ազգային համակարգում առկա որոշ կոռուպցիոն ռիսկեր:

«2012 թ. խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման և հանրային գնումների մոնիտորինգ Հայաստանում 2011-2012 թթ.» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԹԻՅԿ-ն վերլուծել է «Գնումների մասին» նոր՝ 2010 թ. ընդունված օրենքը: Հայաստանում գնումների համակարգի և գնումների կազմակերպման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն 2012 թվականին:

Public procurement

Within the framework of “Analysis of Corruption Risks at the Contract Awarding Stage of Public Procurement Process” grant project TIAC researched best practices among different national procurement systems by comparing them with the public procurement processes in Armenia and identified some corruption risks at its national procurement system.

In the scope of “Monitoring of 2012 Parliamentary Elections Campaign Finance and Public Procurement in 2011-2012 in Armenia” grant project TIAC analyzed the new Law on Procurement adopted in 2010. The findings of the study on procurement system in Armenia and procurement organization will be summarized and presented in 2012.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՓՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



Իրավական աջակցություն

Կազմակերպությունը տրամադրել է իրավական աջակցություն այն քաղաքացիներին ու կազմակերպություններին, որոնց իրավունքները խախտվել են կոռուպցիայի հետևանքով: 2011 թվականին ԹԻՅԿ-ը՝

- սատարել է Նալբանդյան 106 հասցեի բնակիչների բողոքն ընդդեմ բակային տարածքում ծավալվող բազմահարկ շենքի կառուցապատման, որի արդյունքում խախտվել են քաղաքացիների՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու և իրենց կենսագործունեության միջավայրի փոփոխությանն առնչվող որոշումներին մասնակցելու իրավունքները: ԹԻՅԿ-ը տրամադրել է շարունակական խորհրդատվություն և աջակցել պետական կառույցներին դիմումներ գրելու հարցում,

- իրականացվել է քրեական գործով տուժողի իրավահաջորդ Գեորգի Մկրտչյանի շահերի ներկայացում դատական մարմիններում, որի կինը մահացել էր բժշկական սխալի պատճառով «Էրեբունի» բժշկական կենտրոնում: Դեպքի առնչությամբ հարուցվել էր քրեական գործ ու նշանակվել էր չորս դատաբժշկական փորձաքննություն, որոնք տվել էին իրարամերժ եզրակացություններ մահվան պատճառի վերաբերյալ, և դեռևս 2009 թվականին վարույթը կարճվել էր հանցակազմի բացակայության հիմքով: ԹԻՅԿ աջակցությամբ իրականացված դատավարության և գործի նոր քննության արդյունքում 2011-ին դատարանը բավարարել է տուժողի իրավահաջորդի բողոքը և վերացրել քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը՝ ապահովելով քրեական գործի վերսկսումը,
- աջակցություն և իրավախորհրդատվություն է տրամադրվել «Մենք ենք այս քաղաքի տերը» նախաձեռնությանը, մասնավորապես, «Վիշապի կոթողներ» պուրակում իրականացվող անօրինական շինարարության բողոքարկման առնչությամբ: ԹԻՅԿ-ը հաղորդում է ներկայացրել 33 ոստիկանություն Գայի պողոտայի 19/71 հասցեով գտնվող «Վիշապի կոթողներ» այգու 1.800 քմ մակերեսով հողամասում կատարվող ապօրինի շինարարության վերաբերյալ՝ մատնանշելով, որ շրջակա միջավայրի վրա ազդեցու-

HUMAN RIGHTS AND DEMOCRACY



Legal assistance

TIAC provided legal support to citizens and organizations faced with violation of their rights resulted from corruption. In 2011 TIAC supported

- the complaint of residents of 106 Nalbandian Street against construction of a multi-storey building in their yard area, which resulted in violation of the citizens' rights to live in a healthy environment and participation in decision-making on the change of their environment. TIAC provided ongoing consultation and assisted citizens in filing inquiries to state institutions,
- successor of a victim - Georgy Mkrtchyan, whose wife passed away because of a medical error in Erebuni Medical Center by presenting

his interests in judiciary. A criminal case was initiated regarding the case and four forensic medicine examinations were conducted that provided contradictory conclusions on the cause of death, and still in 2009 the criminal proceeding was quashed for lack of corpus delicti. As a result of litigation initiated with the support of TIAC and new examination of the case in 2011 the court redressed the complaint of the successor of victim and overruled the decision on quashing the proceeding, ensuring to restart criminal proceedings,

- and provided legal assistance to “We are the Owners of This City” Initiative, particularly regarding complaint against illegal construction in Dragon Stones (Vishapi Kotoghner) Park. TIAC filed a report to police on illegal construction carried out in 1.800



